



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

<< 06 >> Ծաղարի 2020թ.

N 218-26

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 542-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 26-րդ կետի 10-րդ ենթակետով՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը սահմանելու մասին» N 542-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

 Recoverable Signature

X 

ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

VERIFIED OCSP 06/03/2020 12:20:01 GMT+4

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

Հավելված
 ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի
 «06» Եւրոպա 2020թ. N 218 -Ա հրամանի

Հավելված
 ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի
 « 15 » ապրիլի 2019թ. N 542-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ
 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

N	ԲԱԶԱՅԻՆ	ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
1	<p>Իրավական ակտեր</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ Սահմանադրություն • «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք • «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենք • «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք • «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք • «Հանրային ծառայության մասին» օրենք • Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրություն • ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում • ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի «ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 477-Լ հրաման 	<p>Իրավական ակտեր</p> <ul style="list-style-type: none"> • «Տեղեկատվության ազատության մասին» օրենք • «Զանգվածային լրատվության մասին» օրենք • «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք • «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենք • ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվության գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշում • ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1146-Ն որոշում
2	<p>Այլ</p> <ul style="list-style-type: none"> • Հայերենի իմացություն՝ «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012: http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf • Մեկ օտար լեզվի (ռուսերեն կամ անգլերեն) իմացություն 	<p>Այլ</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգչային հիմնական գործիքների (Word, Excel, PowerPoint) վարժ կիրառման, ինչպես նաև համակարգչային տեխնիկայից օգտվելու ունակություն

• Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ունակություն՝
Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք
հանրակրթական դպրոցի համար:
Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան:
Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան:
Երևան 2012:
<http://fliphtml5.com/fumf/egdx>